ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՔԱՐԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

REPUBLIC OF ARMENIA
ARMAVIR MARZ
KARAKERT MUNICIPALITY

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ
Քարակերտ համայնք, Բարեկամության 2
Հեռախոս՝ 0233/6-25-65, էլ. փոստ՝ qarakert.armavir@mta.gov.am

Armavir Marz Karakert vilige
Barekamutyun 2
Tel. +374233 6-25-65

№ 16

04.02.2016

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ է ներկայացվում ՀՀ Արմավիրի մարզի Քարակերտ համայնքի ավագանու 2016թվականի փետրվարի 01-ի թիվ 1 նիստի թվով 5 որոշումները:

Առդիր՝ 12թերթ:

Քարակերտ համայնքի ղեկավար *Մ. Հարությունյան*

22 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.97/1481-16
«04» 02 2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ
Քարակերտ համայնք, Բարեկամություն 2
Հեռախոս (0233)6-25-65, էլ. Փոստ՝ qarakert.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«01» փետրվար -ի 2016թվականի N 01

ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 01-ի ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով համայնքի ավագանին որոշում է

1,Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Քարակերտ գյուղական համայնքի ավագանու 2016թվականի փետրվարի 01-ի ավագանու նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

	Կողմ (5)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
ՀԱԿՈԲՅԱՆ ՄԻՀՐԱՆ			
ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ			
ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ			
ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԼԱՅԵՐԹ			
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄՈՒՇԵՂ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՀԱՐԹԵՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԿԵՐՏԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 01-Ի ԹԻՎ 01ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 01-ի ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ:

/զեկ. Մ. ՀԱՐԹԵՆՅԱՆ/

2. 2015ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Մ. ՀԱՐԹԵՆՅԱՆ/

3. ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

/զեկ. Մ. ՀԱՐԹԵՆՅԱՆ/

4. ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/զեկ. Մ. ՀԱՐԹԵՆՅԱՆ/

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՅԴ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/զեկ. Մ. ՀԱՐԹԵՆՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ
Քարակերտ համայնք, Բարեկամություն 2
Հեռախոս (0233)6-25-65, էլ. Փոստ՝ qarakert.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«01» փետրվար-ի 2016թվականի N 02-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N-49-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, 56-րդ հոդվածի երկրորդ մասով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Քարակերտ գյուղական համայնքի 2015թվականի դեկտեմբերի 21-ի <<2016ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 49-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (5)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԻՀՐԱՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԼԱՅԵՐԹ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՀԱՐԹԵՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԿԵՐՏԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 01-Ի ԹԻՎ 02-Ն ՈՐՈՇՄԱՆ

Համայնքի բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդ 13159353 դրամը ուղղել ֆոդային բյուջե.

Ֆոնդային բյուջեի 24190880.1դրամը ուղղել.

1. 01.1.1 Պետական կառավարմանը՝ 14539353դրամ, որից
   1) 5113 հոդվածին 9800000դրամ,
   2) 5112 հոդվածին 3359353դրամ,
   3) 5121 հոդվածին 380000դրամ,
   4) 5122 հոդվածին 1000000դրամ:
2. 01.6.1 Ընդհանուր բնույթի հանրային ծառայությանը՝ 1590000դրամ, որից
   1) 5121 հոդվածին 590000դրամ,
   2) 5122հոդվածին 1000000դրամ:
3. 04.5.1 ճանապարհային տրանսպորտին՝ 1300000դրամ, որից.
   1) 5113 հոդվածին 100000դրամ,
   2) 5134հոդվածին 300000դրամ:
4. 06.3.1 ջրամատակարարմանը՝ 561527.1դրամ, որից.
   1) 5112 հոդվածին 261527.1դրամ,
   2) 5134 հոդվածին 300000դրամ:
5. 06.4.1 փողոցների լուսավորությանը՝ 5200000դրամ, որից.
   1) 5113 հոդվածին 5000000,
   2) 5134 հոդվածին 200000դրամ:
6. 06.6.1 բնակարանային շինարարությունը՝ 1000000դրամ, որից
   1) 5113 հոդվածին 1000000դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ
Քարակերտ համայնք, Բարեկամություն 2
Հեռախոս (0233)6-25-65, էլ. Փոստ՝ qarakert.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 01» փետրվար-ի 2016 թվականի N 03-Ն

ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Քարակերտ համայնքի 2015 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

	Կողմ (5)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
ՀԱԿՈԲՅԱՆ ՄԻՀՐԱՆ			
ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ			
ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ			
ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԼԱՅԵՐԹ			
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄՈՒՇԵՂ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ՀԱՐԹԵՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԿԵՐՏԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 01-Ի ԹԻՎ 03-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2015ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Քարակերտ համայնքի 2015թվականի եկամտային մասը կատարվել է՝ 100%-ով, որից.**

1)սեփական եկամուտներ՝	102,2%
2)հողի հարկի՝	100.2%
3)գույքահարկ իրավաբանական անձանցից	95.6%
4)գույքահարկ ֆիզ. անձանցից	105.8%
5)տեղական տուրքեր	152.8%
6)վարձակալական հողերի վարձավճար	91.7%
7)տեղական վճար	77.2%

2. Քարակերտ համայնքի 2015 թվականի վարչական բյուջեի ծախսային մասը կատարվել է՝ 85.8%-ով, որից.

1)տեղական ինքնակառավարում	86.0%
2)համայնքային այլ ծառայություններ	63.7%
3)կրթություն և գիտություն	84.2%
4)սոցիալական ապահովություն	93.3%
5)մշակույթ սպորտ և կրոն	95.6%
6)գյուղատնտեսություն	18.9%
7)անտառային և ջրային տնտեսություն	100.0%
8) սան. մաքրում	87.4%
9)Ճանապարհային տնտեսություն	100.0%
10) արտաքին լուսավորություն	82.3%

3. Քարակերտ համայնքի 2015թվականի Ֆոնդային բյուջեի ծախսային մասը կատարվել է՝ 55.4%-ով, որից.

1)շենք շինությունների կապիտալ վերանորոգում	49.2%
2)տրանսպորտային սարքավորումներ	100.0%
3)վարչական սարքավորումներ	83.2%
4)նախագծահետազոտական ծախսեր	87.0%

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ
Քարակերտ համայնք, Բարեկամություն 2
Հեռախոս (0233)6-25-65, էլ. Փոստ՝ qarakert.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«01» փետրվար - ի 2016թվականի N 04

ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով՝ *համայնքի ավագանին որոշում է*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Քարակերտի գյուղական համայնքի ավագանու հերթական նիստերի ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

	Կողմ (5)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
ՀԱԿՈԲՅԱՆ ՄԻՀՐԱՆ			
ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ			
ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ			
ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԼԱՅԵՐԹ			
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄՈՒՇԵՂ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՀԱՐԹԵՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 01-Ի ԹԻՎ 4 ՈՐՈՇՄԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ

N	օր	ամիս	տարի
1	01	փետրվար	2016
2	04	ապրիլ	2016
3	24	հունիս	2016
4	19	օգոստոս	2016
5	20	հոկտեմբեր	2016
6	09	դեկտեմբեր	2016

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ
Քարակերտ համայնք, Բարեկամություն 2
Հեռախոս (0233)6-25-65, էլ. Փոստ՝ qarakert.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 01» փետրվար-ի 2016 թվականի N 5-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՅԴ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի դրույթներով, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Քարակերտ գյուղական համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման և այդ նպատակով անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներգրավման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

	Կողմ (5)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
ՀԱԿՈԲՅԱՆ ՄԻՀՐԱՆ			
ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ			
ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ			
ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԼԱՅԵՐԹ			
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄՈՒՇԵՂ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՀԱՐԹԵՆՅԱՆ

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի Քարակերտ
Գյուղական համայնքի ավագանու
2016թվականի փետրվարի 01-ի
N 05-Ն որոշման

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՅԴ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Քարակերտ գյուղական համայնքի (այսուհետ՝ համայնք) ղեկավարի կամավոր լիազորությունները սեփական լիազորությունների մասն են:
2. Կամավոր լիազորություններն իրականացվում են համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և համայնքի ավագանու սահմանած սույն կարգով:
3. Սույն կարգում թվարկված կամավոր լիազորություններն սպառիչ չեն: «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից բացի, այլ օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունները համայնքը կարող է իրականացնել միայն որպես կամավոր լիազորություններ: Համայնքի ղեկավարը կարող է իրականացնել համայնքի շահերին վերաբերող, օրենքին չհակասող ցանկացած գործունեություն:
4. Համայնքի ղեկավարը պաշտպանության կազմակերպման բնագավառում իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները.
1) աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը.
2) աջակցում է զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, ինչպես նաև զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը.
3) աջակցում է բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը:
5. Համայնքի ղեկավարը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները.
1) իրականացնում է բնակարանային և սոցիալական նշանակության այլ օբյեկտների շինարարությունը և կապիտալ վերանորոգումը.
2) իրականացնում է կառուցապատման աշխատանքները.
3) կազմում է «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված, ըստ անհրաժեշտության մշակվող, քաղաքաշինական փաստաթղթերի նախագծերը.
4) կազմակերպում է հանգստի վայրերի խնամքը և պահպանությունը.
5) կազմակերպում է սանիտարական մաքրման կայանքների շինարարությունը և շահագործումը:

6. Համայնքի ղեկավարը հողօգտագործման բնագավառում իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները.
1) իրականացնում է համայնքի սեփականություն համարվող հողամասերի բարելավման աշխատանքներ.
2) իրականացնում է ներտնտեսային հողաշինարարական աշխատանքներ:
7. Համայնքի ղեկավարը տրանսպորտի բնագավառում իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունը՝ կազմակերպում է համայնքային ենթակայության ճանապարհների, կամուրջների և ինժեներական այլ կառույցների շինարարությունը:
8. Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում համայնքի ղեկավարն իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները.
1) աջակցում է արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը.
2) աջակցում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանությանը.
3) հաշվառում, դասակարգում և տարածում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային, բնական և տուրիստական-ռեկրեացիոն ռեսուրսների մասին տեղեկատվությունը.
4) աջակցում է երիտասարդության դերի բարձրացմանը.
5) աջակցում է հանրակրթական դպրոցների գործունեությանը:
9. Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համայնքի ղեկավարն իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները.
1) աջակցում է սանիտարական վիճակի բարելավմանը.
2) աջակցում է առողջապահական մարմինների՝ սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացմանը.
3) նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, իրականացնում է սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարություն, ստեղծում է հանգստի գոտիներ:
10. Համայնքի ղեկավարն աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները.
1) նպաստում է նոր աշխատատեղերի ստեղծմանը, կազմակերպում է վճարովի հասարակական աշխատանքներ.
2) միջոցներ է ձեռնարկում հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ:
11. Համայնքի ղեկավարը գյուղատնտեսության բնագավառում իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները.
1) աջակցում է գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը.
2) աջակցում է տոհմային և սերմնաբուծական աշխատանքներին:
12. Համայնքի ղեկավարի՝ համայնքի բյուջեից ֆինանսավորում պահանջող կամավոր լիազորությունների իրականացման նպատակով մինչև համայնքի՝ տվյալ տարվա բյուջեի հաստատումը, համայնքի ղեկավարը համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում

իրականացվելիք կամավոր լիազորությունների ցանկը և դրանց կատարման համար անհրաժեշտ ծախսերը:

13. Համայնքի ավագանին, ելնելով համայնքի բյուջեի հնարավորություններից, որոշում է բոլոր կամավոր լիազորությունների համար հատկացվող ընդհանուր գումարի և յուրաքանչյուր կամավոր լիազորության իրականացման համար անհրաժեշտ հատկացման չափը:

14. Հաշվետու տարվա ընթացքում կամավոր լիազորությունների ընդհանուր գումարի սահմաններում մի կամավոր լիազորության իրականացման նպատակով հատկացված գումարը կարող է համայնքի ավագանու որոշմամբ ուղղվել մեկ կամ մի քանի այլ կամավոր լիազորությունների իրականացման համար՝ ելնելով տարվա ընթացքում իրադրության փոփոխություններից:

15. Սույն կարգի և համայնքի ավագանու կամ Հայաստանի Հանրապետության ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի հետ հակասությունների դեպքում, գործում են այդ իրավական ակտերի նորմերը:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Քարակերտ գյուղական համայնքի ղեկավար՝ **Մ. Հարթենյան**